Արդ գրեցաւ երգըս Դաւթի
Որ կոչի Սաղմոս ճակոբի,
Որ շարագրեալ յանգ ելան
Հարիւր յիսուն փոխն ի տըմի?
Զեռամբ տրուպ Ղազարոսի
Որդւոյ Պարոն Իվաչքոյի.
Առ դուռն Ննջման Աստուածածնի,
Լեհաց յերկրիս Լով քաղաքի,
Եւ ի յաթոռս հայրապետի
Տէր Նիկողայոս (Թորոսովչի).
Արհեպիսկոպոս Լովայ երկրի
Եւ առաջնորդ նորին վիճակի.
Ի թագաւորութեանըն մեծի
Երրորդ Զիկմունդ թագաւորի.
Ի վայելումն բարեհոգի
Թուքան անուն ճգնաւորի,
Որ այժմ եկեալ առ մեզ չրջի
Պանդըխտութեամբ յայսմ երկրի.
Տացէ Նըմա Աստուած բարի
Զայս վայելել յերկար յերկրի.
Եւ յետ աստեացս նորին լիցի
Ճիշատակ սուրբ եկեղեցի:
Ի թուականիս մեր տումարի
Հազար եօթանասուն ինն աւելի,
Եւ յունիսի քսան և վեցի,
Շնորհօք Տեառն յաւարտ հասի:
Արդ աղաչեմ արտասուալի,
Անմեղադիր լերուք գըրի.
Մանուկ տիօք զայս գըրեցի,
Երկոտասան ամաց էի:
Ո՛վ ընթերցողք այսըմ տառի,
Կամ օրին(ակ)ողքն այսըմ գըրի.
Միով հայցեմ Տէր ողորմիւ՝
Մի մոռանայք զիս եղկելիս:

1629.

Յոհաննէս Ազիզն ստացաւ զսուրբ Աւետարանս, յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն Յոչխապարին և մօրն Յանպէկի, կողակցին՝ Մարիամին, և եղբարցն՝ Սարուխանին, Նիկողայոսին, և քըւերցն՝ Շահազային, և ազգականացն, որդւոցն և դստերացն:...

1629.

... Այս աստուածաւանդ Աւետարանիս եռանդնոտ սիրով տենչացայ ես անարժան հողս ու փոշիս տրուպ և հուսկ նիազս, ոտից կոխան և յետնեալս յամենայնի, Բաբերթեցի Ղազար վարդապետս, գրել մատամբ իմով զայս սուրբ Աւետարանս, որում ի մանկութենէ ի վեր խանդակաթ սիրով կու ցանկայի և տենչայի գրել. որ և ընորհիւ Փրկչին մերոյ գծագրեցի, զոր սիրեաց անձն իմ. յիշատակ ինձ և իմ ծնողացն Նիկողոսին և իմ մօրն Շնոճորին, և իմ եղբարցն, Մարտիրոսին և քըւերն իմ Ղուդրատին, և ամենայն ազբեան մերձաւորացն իմ. վասն որոյ ցնծացայ և ուրախացայ՝ իբրեւ զունողս աւարաց բազմաց պատուականաց. այլ և զանազան գունով ծաղկեցի և գեղեցկանկար չորից աւետարանչացն պատկերագրութեանց յօրինածոք չքեղացուցի զսա, զի մի՛ լսելեօք միայն՝ այլ և աչաց տեսողութեամբ զուարճասցին հանդիպեալքն՝ ի խրախճանութեան աքանչելի տօնից աստուածային տնօրէնութեանն Քրիստոսի. իբրու հայելեաւ իմիք անմիջոց տեսանելով ի նկարս կենդանագրեալս զփրկարար գործսն Քրիստոսի. և ի բարի օրինակէն բարեմտութեամբ չահեալք՝ յօժարամիտ լիցին ի կցորդութիւն գործոցն Քրիստոսի և բանիցն